

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 15/02

ք. Երևան, Արշակունյաց 5.417 սենյակ

22.12.2017թ. ժամը 17:10

Համաձայն 30.11.2017թ. թիվ 01-1247 գրությամբ՝ «Ագրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲ ընկերությունից, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 04.12.2017թ-ին ստացված դիմումը քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աղասի Արսենյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Դեկտեմբերի 22-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ «Ագրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲ ընկերությունը
Քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աղասի Արսենյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աղասի Արսենյանը

Դիմումատու՝ «Ագրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲ ընկերությունը պատշաճ ծանուցված և տեղյակ լինելով հանձնաժողովի նիստի, տեղի և ժամանակի մասին, նիստին չէր ներկայացել, չէր ներկայացրել նաև գրավոր առարկություններ կամ դիմումին կից լրացուցիչ փաստաթղթեր, ուստի նիստը անցկացվեց առանց դիմումատուի:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«Ագրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲ ընկերությունից, 30.11.2017թ. թիվ 01-1247 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 04.12.2017թ-ին ստացված դիմումը քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աղասի Արսենյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Ագրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲ ընկերությունից, թիվ 01-1247 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 04.12.2017թ-ին ստացված դիմումը՝ քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աղասի Արսենյանի վերաբերյալ, հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը և խնդրեց հայտնել կարծիք առանց դիմումատուի հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և հայտնեցին կարծիք, որ դիմումատուն պատշաճ ծանուցված են եղել հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և նրա

բացակայությունը կարելի է դիտել հանձնաժողովին, բացի իրենց գրած դիմումից, այլ փաստեր չլինելու հանգամանք և ավելացնելու բան չունենալու ապացույց, ուստի նրանց բացակայությունը կարելի է ընդունել որպես իրենց կարծիքը արտահայտող դիրքորոշում, ուստի բոլորը միակարծիք էին, որ նիստը կարելի է անցկացնել դիմումատուի բացակայությամբ:

Հանձնաժողովի նախագահին կարծիք հարցրեց նաև քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանից, առանց դիմումատուի նիստը անցկացնելու վերաբերյալ: Կառավարիչը հայտնեց այն կարծիքը, որ գերադասելի էր, որ դիմումատուին ներկա գտնվեր և անձամբ հայտներ իր կարծիքը կառավարչի աշխատանքի վերաբերյալ, բայց իր կարծիքով նրանք արդեն բավարված են կառավարչի գործողություններից և դիմում նշվածից բացի այլ բան չունեն հայտնելու հանձնաժողովին և եթե նրանց բացակայությունը չի խանգարում հանձնաժողովի անդամներին եզրակացության գալու համար, ուստի ինքը մույնպես չի առարկում հանձնաժողովի նիստը առանց դիմումատուի անցկացնելու կարծիքին:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և առաջարկեց հանջնաժողովի անդամներին քննարկել քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Ազրա Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲ ընկերությունից, 30.11.2017թ. թիվ 01-1247 գրությամբ, «ՍԳԿ» ԻԿԿ-ում՝ 04.12.2017թ-ին ստացված դիմումի հիմքով, քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում նշված հանգամանքները, քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյանը, առաջարկեց լսել ներկա գտնվող քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստաթղթերը:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը ձայնը տվեց, քաղաքացի Սամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանին, ով մասնավորապես նշեց, որ քաղաքացի Սամվել Հարությունյանը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԼԴ/0028/04/12 վճռով ճանաչվել է սնանկ, նույն դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Ադասի Արսենյանը, որից անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների և լիազորությունների կատարմանը, որի հետևանքով գույքագրվել է պարտապահին սեփականության իրավունքով պատկանող գույքը այդ թվում պատրաստի արտադրանք, հումք և սարքավորումներ/քարի կտրման հաստոց/, որոնք գտնվել են ք.Վանաձոր, Գործարանային փող.1-ին նրբ.1 հասցեում: Նշված հասցեում

իրականացվել է քարի կտրման հոկման և այլ աշխատանքներ, կապված քարի մշակման հետ և գործունեությունը իրականացվել է շինության մեջ տեղադրված/ստացիոնար/ մոտ 5 մետր բարձրությամբ քարի կտրման հաստոցի միջոցով, որը պատկանում է պարտապանին և այժմ գնվում է աճուրդային վաճառքի մեջ: Տվյալ դեպքում շինությունը իրացնելով ստեղծվել է իրավիճակ, որ այդ շինությունը նպատակային օգտագործել կարելի է միայն քարի մշակման գործունեության շարունակելու միջոցով, որի հիմք է հանդիսանում քարի կտրման հաստոցը, որը է դեպ տեղադրված է հիմքերի վրա, բետոնով ամրացված/ստացիոնար/ և նրա տեղափոխման համար պիտի քանդվի շինության մի մասը և կատարվի իր գնի հետ համեմատած մեծ ծախս: Վերոգրյալի հաշվարկով մոր գնորդը քարի կտրման հաստոցը իր գնից անհամեմատ էժան գնելու ցանկությամբ, ստեղծում է բանկի միջոցով այս իրավիճակը, որպեսզի հասնի իր նպատակներին, իսկ բանկը իրացնելով այդ շինությունը, իր կողմից կառավարչին դրել է փաստի առաջ, որ կատարի ծախսեր, կրի վնասներ և վնաս պատճառի այդ շինության մոր սեփականատիրոջը, գույքի տեղափոխման ընթացքում: Ներկա պահին մոր սեփականատիրոջ հետ ձեռք են բերվել օրենքով սահմանված պայմանավորվածություններ գույքի գնման վերաբերյալ և այդ հարցի լուծումը մոտ ապագայում կտրվի: Ինչ վերաբերվում է բանկի գրություններին և բանկի աշխատակցի զանգին, ապա հայտնեն, որ անհասկանալի է բանկի կողմից գրությունների առկայությունը, եթե իրենք գույքը իրացրել են և ստացել են իրենց գույքի արժեքը, ինչ պարտականություններ ունեն մոր սեփականատիրոջ առջև այդ գույքի վերաբերյալ և ինչ իրավունքներ ունեն այդ գույքի հետ կապված հարցերի և ուրիշ սեփականատիրոջ սահմանադրական իրավունքների պաշպանության հետ: Այդ պարագաների կոնտեկստում, ստանում են զանգ բանկից, ում աշխատակցի կողմից, որը զանգելով և ոչ կոնստրուկտիվ տոնով, ներկայանելով հարցի էությունը մոտ 3-5րոպեում, բացատրություններ է պահանջում այլ գործով կառավարչից, իրենց պահանջները արագ, որակով և անվերապահ չկատարելու համար: Իմ կողմից համբերատար լսվել է այդ ամբողջը և երկու անգամ խնդրել են ընդհատել միակողմանի խոսքը և իրեն մույնպես հնարավորություն տալ խոսելու և բացատրելու, չստանալով այդ հնարավորությունը երրորդ անգամ խնդրանքը հայտնվել է ավելի բարձր տոնով, քանի որ այդ աշխատակցի կողմից մույնպես խոսակցությունը տարվում էր տաքացած տոնով, փորձելով լսելի լինել և չստանալով խոսելու և լսվելու հնարավորություն, անիմաստ են համարել շարունակել լսել միակողմանի անհիմն պահանջներ մեկի կողմից, ով իրավասու էլ չի տվյալ հարցի վերաբերյալ պահանջներ ներկայացնելու, անջատել են հեռախոսը: Երկրորդ անգամ տվյալ անձնավորության զանգին պատասխանելով, իր հարցին թե հեռախոսը անջատվեց, թե դուք անջատեցիք, պատասխանել են, որ ես անջատեցի և ինչ պատճառով:

Հանձնաժողովի անդամ՝ Մ. Մարտիկյանը հարց ուղղեց կառավարչին, թե ներկա պահին այդ հարցի հետ կապված, մոր սեփականատիրոջ հետ կան արդյոք նմանատիպ հարց է թե ոչ:

Կառավարիչը պատասխանեց, որ գույքի տեղափոխման հետ կապված բոլոր հարցերը լուծված են և մոր սեփականատիրոջ հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ այդ գույքի գնման հետ կապված հարցերում և գնելուց հետո գույքը կհանձնվի նրան կամ նրա նշած անձին, այսինքն՝ այդ հարցերի լուծման հետ բանկը կապ չունի և չի էլ կարող ունենալ և զարմանալի է, որ բանկը ինքը մտնելով իրեն չվերաբերվող հարաբերությունների մեջ անհարգալից է համարում իր ահնդեպ վերաբերմունքը և անհարգալից չի համարում իր վերաբերմունքը կառավարչի հանդեպ:

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Ադամյանը հարց ուղղեց կառավարչին թե արդյոք մոր սեփականատիրոջ կողմից չի բարձրացվել այդ հարցը: Կառավարչի կողմից բացատրվեց որ այդ հարցը չի բարձրացվել այլ քննարկվել է այլ հարց իր պարտապանի կողմից անձնական իրերի շինությունից դուրս հանելու և բալանիների հանձնման հետ կապված հարցերը, բայց քանի որ և բանկը և մոր սեփականատերը չէին կարողանում այդ հարցը լուծել, ուստի մոր սեփականատերը բանկի միջոցով փորձում է ազդել պարտապանի վրա և այդ գործընթացին փորձում են խառնել նաև սնանկության գործով կառավարչին, որպեսզի իմ միջոցով ազդեն պարտապանի վրա և վերոգրյալ բալանիների և հաստոցի և մնացած գույքի հետագա անհամեմատ էժան գնման նպատակով, իսկ բանկի որոշ աշխատակիցներ կողմ չհանդիսանալով կամ իրենց անձնական շահերի սպասարկման համար առանց վերլուծելու իրավիճակը միջամտում են իրենց չվերապահված հարցերի շրջանակ և երբ փորձում են բացատրել՝ չեն տալիս հնարավորություն և գրում են անհիմն դիմում-բողոքներ:

Բացի դրանից կառավարիչը նշեց որ իրենից պահանջվող կատարվելիք գործողությունների բանկի սցենարով կատարելու դեպքում կկատարվեին ավելորդ ծախսեր և վնասներ կպատճառվեին՝ պարտապանին, պարտատերերին և նոր սեփականատիրոջը, որը կառավարչի կողմից չէր լինի ճիշտ գործողություններ և իր մեջ կպարունակեր օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը, մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիրոսյանը հայտնեց այն կարծիքը, որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների և կից փաստաթղթերի համադրումից պարզ է, որ դիմումատու տեղյակ է սնանկության վարույթից, կառավարչի իրավունքներից և պարտականություններից, և իր կարծիքով բանկը այդ գույքի հետ կապված իրավասություններ չունենալու պարագայում, փորձում է կառավարչի գործողություններից բողոքելով ստիպել կառավարչին խախտելով այլ կողմերի իրավունքները կատարել նոր սեփականատիրոջը հարմար գործողություններ, առանց մյուս կողմերի պահանջների բավարարման իրավունքը հաշվի առնելու:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց, որ սնանկության վարույթում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է գույքագրված գույքի պահպանման կարգը և դա դրված է սնանկության գործով կառավարչի վրա իմպերատիվ ձևով: Այսինքն կառավարիչն ինքն է որոշում պահպանման ձևը և կարգը և կրում դրա հետ կապված հետագա վնասների, կորստի կամ այլ պատասխանատվությունը այդ իրավիճակում կառավարչի գործողությունները պետք է ուղղված լինեն գույքի անբողջականության, իրացվելիության և այլ թերություններից պահպանմանը, որը հետագայում իրացնելուց հետո, ստացված միջոցները պարտատերերի պահանջների բավարարմանը ուղեկու համար: Այս պարագայում կառավարիչ՝ Ա.Արսենյանի գործողությունները հիմնավորված են այդ հոդվածի հիմքով, այսինքն իրավաչափ են և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ հիմնականում անգործության մեղադրանքներին ապա դրանք չեն կարող համապատասխանել իրականությանը, քանի որ կառավարչի կողմից կազմակերպված է գույքի պահպանությունը և դրա կարգի, ձևի կամ այլ հարցերի վերաբերյալ, շահագրգիռ կողմերից ոչ մի բողոք կամ գրություն չի ստացվել և չկա:

Այսինքն ՍԳ կառավարիչ՝ Ա.Արսենյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով, իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է, որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել, ՍԳ կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ - 0

Չեղմպահ - 0

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝

1. «Ազգա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲ ընկերությունից, 30.11.2017թ. թիվ 01-1247 գրությամբ, «ՍԳ-ԿԿ» ԻԿԿ-ում՝ 04.12.2017թ-ին ստացված դիմումի հիմքով, քաղաքացի Մամվել Հարությունյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ադասի Արսենյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել, քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Սարգիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

